# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

07 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Նորայր Անտոնյանը, Արամ Խաչատրյանը, Էդգար Հակոբյանը, Գեվորգ Հովհաննիսյանը, Մացակ Սողոմոնյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վարդգես Բոյաջյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը**

Լսեցին

***ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԷԴԳԱՐ ՄՆՈՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, 90-րդ հոդվածի 4-րդ կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի բյուջեի ֆոնդային մասում կատարվող ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման փաստի մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 11 000 000 / տասնմեկ միլիոն/ ՀՀ դրամ հատկացնել բյուջեի ֆոնդային մաս՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ն/

Լսեցին

***ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.01.2022 ԹՎԱԿԱՆԻ N 06-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԳԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.01.2022 թվականի N 06-Ն որոշմամբ հաստատված հավելված 7-ում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- Հաստիքային 14,75 միավորը փոխարինել հաստիքային **15,5** միավորով

- Աշխատակիցների 18 թվաքանակը փոխարինել աշխատակիցների **19 թվաքանակով**

- հաստիքացուցակը լրացնել նոր 19-րդ տողով՝ **դաստիրակի օգնական, հաստիքային միավորը՝ 0,75, պաշտոնային դրույքաչափը 94.000, բարձր լեռնային 8000, ընդամենը 76.500**

- հաստիքացուցակի ընդամենը տողում կատարել փոփոխություն հաստիքային 14,75 միավոր փոխարինել հաստիքային **15,5** միավորով, պաշտոնային 1.754.000 դրույքաչափը փոխարինել պաշտոնային **1.848,000** , դրույքաչափով , բարձր լեռնային 144.000-ը փոխարինել բարձր լեռնային **152.000 թվերով**, ընդամենը 1.555.500-ը փոխարինել ընդամենը **1.632.000** թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ն/

Լսեցին

***ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2023-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԳԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է .**

1. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ն/

Լսեցին

***ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 -Ի ԹԻՎ 08 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՎԱՐԴԳԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով, համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 7-ի ավագանու թիվ 08 հերթական նիստի օրակարգը հետևյալ բովանդակությամբ՝

1/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից բյուջեի ֆոնդային մաս հատկացում կատարելու մասին:

2/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու 24.01.2022 թվականի N 06-Ն որոշմամբ հաստատված հավելված 7-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

3/ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ն/

Ավագանու անդամներ

ԿԱՐԵՆ ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՍԵՎԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՎԱՉԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Համայնքի ղեկավարի ժ/պ*

ՎԱՐԴԳԵՍ ԲՈՅԱՋՅԱՆ_____

*Նիստն արձանագրեց՝* Արայիկ Ավետիսյանը

_____